



**Կարգապահական գործ թիվ 20046**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի  
2021թ-ի ապրիլի 06-ի թիվ 261-րդ ԿԳ նիստի

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
ԹԻՎ ԿԳ/155-Ա**

**ՓԱՍՏԱԲԱՆ ԼԵՎՈՆ ՌՈՒԲԵՆԻ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ԵՎ ՄԽԻԹԱՐ ԲԱՐԻՍԻ ԲԵԳՅԱՆԻՆ  
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ  
ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը (**այսուհետ նաև՝ խորհուրդ**), նիստը նախագահող՝ խորհրդի անդամ Կարեն Սարգսյանի, խորհրդի անդամներ՝ Սիմոն Բաբայանի, Մանե Կարապետյանի, Մարինե Ֆարմանյանի, Հարություն Հարությունյանի, Էմին Բեգլարյանի, Ռուբեն Հակոբյանի, Լիլիթ Ղազանչյանի և Արսեն Հարությունյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Աստղիկ Գևորգյանի,

քննության առնելով փաստաբան Մխիթար Բեգյանին (արտոնագիր՝ թիվ 806) և Լևոն Սահակյանին (արտոնագիր՝ թիվ 1245) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

**Պ Ա Ր Ձ Ե Ց՝**

**1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.**

ՀՀ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի նախագահ Հովհաննես Ավագյանը (**այսուհետ՝ նաև Դիմող**), դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (**այսուհետ՝ նաև Պալատ**), հայտնել է հետևյալը.

Փաստաբաններ Լևոն Սահակյանը և Մխիթար Բեգյանը (**այսուհետ՝ նաև Փաստաբաններ**) քրեական գործով հանդիսանում են ամբաստանյալ Հայրապետ Սեփոյանի պաշտպանները:

Փաստաբանները, պատշաճ ծանուցված լինելով դատական նիստերի ժամանակի և վայրի մասին, չեն ներկայացել դատական նիստերին, ինչի հետևանքով դատական նիստերը անհարկի ձգձգվել են:

Մասնավորապես՝

- Քրեական գործը դատական քննության նշանակվելուց հետո թվով 41 դատական նիստերի տեղի և ժամի մասին լինելով պատշաճ ծանուցված՝ թվով 17 դատական նիստերին միաժամանակ Փաստաբանները չեն ներկայացել:

- 27.05.2020թ. գործի դատաքննությունն ավարտվել է, որից հետո մեղադրողին ճառով հանդես գալուն նախապատրաստվելու համար նիստը հետաձգվել է, ինչից հետո փաստաբանները կրկին չեն ներկայացել դատական նիստերին, որոնք նշանակված են եղել 23.06.2020թ.-ին, 13.07.2020թ.-ին, 04.08.2020թ.-ին և 19.08.2020թ.-ին:

Ուստի ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործող օրենսդրությամբ դատարանը զրկված է փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու լիազորությամբ, իսկ փաստաբանների նկատմամբ դատական տուգանք սանկցիան կիրառելն այս պահի դրությամբ նպատակահարմար չէ, Դիմողը խնդրել է քննարկման առարկա դարձնել Փաստաբանների վարքագիծը:

## **2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.**

Պալատի նախագահի 24.09.2020թ. թիվ 352-Ա/ԿԳ-20046 որոշման հիման վրա՝ փաստաբաններ Լևոն Սահակյանի և Մխիթար Բեգյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» օրենքի (**այսուհետ՝ նաև Օրենք**) 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի Կանոնագրքի 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշներով:

28.09.2020թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Արմեն Սիմոնյանին (**այսուհետ նաև՝ Նախապատրաստող**):

## **3. Դիմողի և Պատասխանողների համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.**

### **3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.**

Գործի նախապատրաստման ընթացքում Դիմողը բացատրություն չի ներկայացրել: Պալատի խորհրդի նիստին Դիմողը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցված է եղել կարգապահական նիստի օրվա, վայրի և ժամի մասին:

### **3.2. Փաստաբան Լևոն Սահակյանի համառոտ դիմումը.**

04.09.2020 թվականին պալատ է մուտքագրվել (**մուտք՝ №-1913-20**) փաստաբան Լևոն Սահակյանի դիմումը, որում նշվել է հետևյալը.

դիմումում բացակայում է խնդրանք իրեն կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին: Դատավորն ընդամենը խնդրել է քննարկման առարկա դարձնել իր վարքագիծը՝ հնարավորության սահմաններում ապահովելով իր պատշաճ մասնակցությունը դատական նիստերին: Փաստաբանը խնդրել է տեղեկացնել, թե ինչ առերևույթ հիմքի վերաբերյալ է իրեն առաջարկվում ներկայացնել բացատրություն:

Գործի նախապատրաստման ընթացքում Լևոն Սահակյանը բացատրություն չի ներկայացրել և Պալատի խորհրդի նիստին չի ներկայացել:

**3.3. Փաստաբան Մխիթար Բեգյանի համառոտ բացատրությունը.**

Գործի նախապատրաստման ընթացքում Մխիթար Բեգյանը 26.11.2020 թվականին ներկայացրել է բացատրություն, (**մուտք՝ №-2684-20**) որում նշվել է հետևյալը.

«Կոտայքի մարզի առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանի նախագահ Հովհաննես Ավագյանի դիմումում նշված դատական նիստերին չեն մասնակցել տարբեր պատճառներով (առողջական վիճակ, մեկ այլ գործով դատական նիստ, աշխատանքային գերձանրաբեռնվածություն և վստահորդի հանձնարարություն):

Փաստաբանը ավելացրել է նաև, որ իր կողմից տվյալ գործով որոշ նիստերին չներկայանալը չի կարող մեկնաբանվել որպես դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք, քանի որ գրեթե միշտ տեղեկացրել է դատարանին դատական նիստին չներկայանալու օբյեկտիվ պատճառների մասին:

Պալատի խորհրդի նիստին Մխիթար Բեգյանը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցված է եղել կարգապահական նիստի օրվա, վայրի և ժամի մասին:

**3.4. Վկաների ցուցմունքները.**

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

**4. Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.**

Կարգապահական գործի նախապատրաստման արդյունքում Նախապատրաստողը 27.11.2020թ. կազմել է եզրակացություն:

Նախապատրաստողի եզրակացության վերաբերյալ առարկություն չի ներկայացվել:

Կարգապահական գործը խորհրդին է հանձնվել 03.12.2020թ-ին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 06.04.2021թ-ին, ժամը 18:30-ին, «Վաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

**5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.**

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ՝ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի (**այսուհետ նաև՝ Կարգ**) 3.10.3 ենթակետի համաձայն՝ *Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

**Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.**

- Պատասխանողները հանդիսանում են թիվ ԿԴ1/0059/01/16 քրեական գործով ամբաստանյալի պաշտպանները: Սույն փաստը հաստատվում է դիմումով, Փաստաբանի ներկայացրած բացատրությամբ, Փաստաբանների կողմից դատական նիստերը հետաձգելու մասին միջնորդություններով և գործում առկա այլ փաստաթղթերով:

➤ **Փաստաբան Մխիթար Բեգյանի մասով հաստատված փաստերը**

- Մխիթար Բեգյանը պատշաճ ծանուցված է եղել 23.06.2020թ. նշանակված դատական նիստի մասին, որին չի ներկայացել և չի ներկայացրել նաև միջնորդություն այն հետաձգելու մասին: Սույն փաստը հաստատվում է 23.06.2020թ. դատական նիստի արձանագրությամբ (էջ 54):

- Մխիթար Բեգյանի բացակայությունը 13.07.2020թ. նշանակված դատական նիստին Դիմողը համարել է հարգելի: Սույն փաստը հաստատվում է 13.07.2020թ. դատական նիստի արձանագրության պատճենով: (էջ 50)

- Մխիթար Բեգյանը պատշաճ ծանուցված է եղել 04.08.2020թ. նշանակված դատական նիստի մասին, որին չի ներկայացել և ներկայացրել է միջնորդություն այն հետաձգելու մասին՝ պայմանավորված բարձր ջերմությամբ:

- Մխիթար Բեգյանը պատշաճ ծանուցված է եղել 19.08.2020թ. նշանակված դատական նիստի մասին, որին չի ներկայացել: Սույն փաստը հաստատվում է գործում առկա ծանուցագրով և դատական նիստի արձանագրությամբ:

➤ **Փաստաբան Լևոն Սահակյանի մասով հաստատված փաստերը**

- Լևոն Սահակյանը պատշաճ ծանուցված է եղել 23.06.2020թ. նշանակված դատական նիստի մասին, որին չի ներկայացել և չի ներկայացրել նաև միջնորդություն այն հետաձգելու մասին: Սույն փաստը հաստատվում է գործում առկա ծանուցագրով, փոստային հետադարձ ծանուցման կտրոնի պատճենով և դատական նիստի արձանագրությամբ:

- Լևոն Սահակյանի բացակայությունը 13.07.2020թ. նշանակված դատական նիստին Դիմողը համարել է հարգելի: Սույն փաստը հաստատվում է 13.07.2020թ. դատական նիստի արձանագրության պատճենով: (էջ 50)

- Լևոն Սահակյանը պատշաճ ծանուցված է եղել 04.08.2020թ. նշանակված դատական նիստի մասին, որին չի ներկայացել և ներկայացրել է միջնորդություն այն հետաձգելու մասին՝ պայմանավորված իր կողմից անհետաձգելի քննչական գործողությանը մասնակցելու հանգամանքով: Սույն փաստը հաստատվում է Լևոն

**Սահակյանի ներկայացրած միջնորդությամբ:**

- **Լևոն Սահակյանը** պատշաճ ծանուցված է եղել 19.08.2020թ. նշանակված դատական նիստի մասին, որին չի ներկայացել և ներկայացրել է միջնորդություն այն հետաձգելու վերաբերյալ պայմանավորված իր կողմից այլ դատական նիստին մասնակցելու անհրաժեշտությամբ: Սույն փաստը հաստատվում է գործում առկա միջնորդության պատճենով:

**6. Փաստաբանների անձը բնութագրող հանգամանքները.**

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝

- **Լևոն Սահակյանը** փաստաբան է հանդիսանում 15.10.2011 թվականից: 2018-2021թթ. ընկած ժամանակահատվածում, վերջինիս նկատմամբ կարգապահական վարույթ չի հարուցվել:

- **Մխիթար Բեգյանը** փաստաբան է հանդիսանում 14.10.2008 թվականից: 2018-2021թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ հարուցվել է 1 կարգապահական վարույթ, որը կարճվել է:

**7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.**

**Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Մխիթար Բեգյան և Լևոն Սահակյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը պետք է կարճվի՝ հետևյալ պատճառաբանությամբ:**

**Օրենքի 39-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝** փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնադրքի պահանջները խախտելու համար:

**Կանոնագրքի 4.1 ենթակետի համաձայն՝** Փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև, պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի գործունեությունը կարգավորող կանոններին, այդ թվում պետք է հարգանքով վերաբերվի դատավորին և/կամ դատավարության մյուս մասնակիցներին: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի, արբիտրի, կամ վարույթի այլ մասնակիցների գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Փաստաբանը դատարանի հանդեպ հարգանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը:

Կանոնագրքի մեջբերված իրավադրույթից հետևում է, որ փաստաբանը, վարելով իր վստահորդի գործը դատարանում կամ արբիտրաժային տրիբունալում, պարտավոր է ենթարկվել այդ հաստատություններում վարքագծի ճանաչված, ընդունված և (կամ) ամրագրված կանոններին: Կանոնագրքի 4.1 ենթակետով նախատեսված նորմը նաև վկայակոչող է և հղում է պարունակում փաստաբանի և դատարանի հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտի: Տվյալ դեպքում, հաշվի առնելով, որ խոսք է գնում

քրեական գործի դատական քննության մասին, այդ իրավական ակտը ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքն է (**այսուհետ՝ նաև ՔԴՕ**):

**ՔԴՕ-ի 73-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին մասի համաձայն՝** Պաշտպանը պարտավոր է՝ կասկածյալին և մեղադրյալին իրավաբանական օգնություն ցույց տալու համար ներկայանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով:

**Քննարկելով Փաստաբանի վարքագիծը վերը նշված համատեքստում՝ Խորհուրդն անհրաժեշտ է համարում պատասխանել հետևյալ հարցադրումներին.**

1. արդյոք փաստաբանները ԿԴ1/0059/01/16 քրեական գործով հանդիսանում են պաշտպան.

2. արդյոք փաստաբանները ԿԴ1/0059/01/16 քրեական գործով դատական նիստերի ժամանակի և վայրի մասին պատշաճ ծանուցված են եղել.

3. արդյոք փաստաբանների կողմից քրեական գործով նշանակված դատական նիստերին չմասնակցելը եղել է անհարգելի:

Հարկ է նշել, որ դատական նիստի արձանագրություններից պարզ է դառնում, որ Լ. Սահակյանը և Մ. Բեգյանը ԿԴ1/0059/01/16 քրեական գործով հանդիսանում են պաշտպան:

Վերջիններս պատշաճ ծանուցված են եղել վերոնշյալ դատական նիստերի մասին:

Փաստաբաններ Լ.Սահակյանի և Մ.Բեգյանի դիմումների բովանդակությունից պարզ է դառնում, որ վերջիններս միտում չեն ունեցել չենթարկվելու դատարանի գործունեությունը կարգավորող կանոններին:

Հարկ է փաստել, որ կողմերի բացակայությունը նշանակված դատական նիստերից հետևանք է հանդիսացել զուտ աշխատանքային ծանրաբեռնվածության, ինչպես նաև առաջացած առողջական խնդիրների և նպատակ չի հետապնդել անհարգալից վերաբերմունք դրսևորել դատարանի նկատմամբ կամ երկարաձգել դատական գործի քննությունը կամ խոչընդոտ հանդիսանալ պաշտպանյալին իրավաբանական ծառայություններ մատուցելուն, քանի որ փաստաբաններից մեկի բացակայության պայմաններում գրեթե միշտ մյուս փաստաբանը մասնակցություն է ապահովել:

Ավելին, հարկ է փաստել, որ թվով 41 դատական նիստից 3 նիստից բացակայությունը չի կարող մեկնաբանվել որպես Կանոնագրքի 4.1. ենթակետի խախտում, քանի որ դրանք չեն կրել պարբերական բնույթ, կազմում են փոքր տոկոս ընդհանուր նիստերի հարաբերակցության մեջ: Ավելին, փաստաբանների կողմից վերոնշյալ դեպքերում գրեթե միշտ ներկայացվել են համապատասխան միջնորդությունները՝ խնդրելով հետաձգել դատական նիստը և ներկայացնելով համապատասխան հիմքերը, որոնք կցված են գործին: Չպետք է բացառել նաև այնպիսի

իրավիճակները, երբ բացակայության պատճառները միանգամայն օբյեկտիվ են և հարգելի, սակայն միշտ չէ, որ հնարավոր է այդ պատճառների վերաբերյալ ներկայացնել իրավահաստատող փաստաթղթեր:

Հարկ ենք համարում հավելել, որ մեղադրողի կողմից աշխատանքային ծանրաբեռնվածության հետևանքով, ինչպես նաև COVID19 հիվանդությամբ վարակված անձի հետ շփում ունենալու հիմքով ինքնամեկուսացման մեջ գտնվելու պատճառով, այն է՝ առողջական խնդիրների բերմամբ նիստերին չներկայանալը (ի դեպ սույն գործի արձանագրությունից չի երևում, որ ներկայացվել է համապատասխան փաստաթուղթ), դատարանն, այնուամենայնիվ, իրավացիորեն ճանաչել է հարգելի: Հիմք ընդունելով վերոնշյալը, ինչպես նաև զենքերի հավասարության սկզբունքը, նույն կերպ հարգելի պետք է ճանաչվեն նաև փաստաբաններ Լ.Սահակյանի և Մ.Բեգյանի բացակայությունները:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի, 39-րդ և 39.8 հոդվածների պահանջներով՝

Խորհուրդը

### **Ո Ր Ո Շ Ե Ց՝**

**1. Փաստաբաններ Լևոն Սահակյանի (արտոնագիր՝ թիվ 1245) և Մխիթար Բեգյանի (արտոնագիր՝ թիվ 806) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել:**

**2. Հանձնարարել ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել Դիմողին և փաստաբան Լևոն Սահակյանին և Մխիթար Բեգյանին:**

Ծանոթություն. *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի  
կարգապահական գործով  
նիստը նախագահող՝

Կարեն Սարգսյան

**06 ապրիլի 2021թ.  
թիվ ԿԳ/155-Ա  
ք. Երևան**